

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՍԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
(ըստ 2013-2014 թթ. սոցիոլոգիական հարցման տվյալների)**

Ա. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ պատմության ամբիոնի դասախոս*

Ինչպես աշխարհի շատ պետություններում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում հիմնական բնակչությունից՝ հայերից զատ բնակվում են շուրջ 90 այլ էթնիկ հանրություններ (ազգ, ազգություն, ժողովուրդ): 2013-14 թթ. իրականացված սոցիոլոգիական ուսումնասիրության միջոցով փորձ ենք արել բացահայտել արդի Հայաստանի բնակչության միջէթնիկ փոխհարաբերություններն ու վերաբերմունքի դրսևորումները, վերջիններիս նկատմամբ հայերի դիրքորոշումները, հայ հասարակության մեջ նրանց նկատմամբ հանդուրժողականության և խտրականության դրսևորման ձևերն ու միտումները:

Հարցումն իրականացվել է բնակչության երկիրն ընտրելու մարդու իրավունքի, հայերի կողմից իրենց երկրում այլ էթնիկ հանրություններին՝ ազգային փոքրամասնություններին տեսնելու կարգավիճակի, նրանց հետ ամուսնական, աշխատանքային կամ այլ հարաբերությունների մեջ գտնվելու մոտեցումների գնահատման, իրավունքների ու շահերի հարգման և նրանց նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի միտումների կտրվածքներով: Հիշյալ հարցերը դիտարկվել են նաև ազգային փոքրամասնությունների տեսանկյունից:

Հաշվի առնելով Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների սփռվածության աստիճանն ու այն հանգամանքը, որ մեր օրերում նրանցից բազմաքանակը եզդիներն են, որպես հետազոտության օբյեկտ հիմնականում ընտրվել են նրանք: Իրականացված սոցիոլոգիական հարցումների հիման վրա փորձ ենք արել ներկայացնել հայերի ու ազգային փոքրամասնությունների փոխհարաբերությունների դրսևորումները և այդ ոլորտում Հայաստանում առկա իրավիճակը:

Հարցումն իրականացվել է Երևանի, Վանաձորի և Գավառի բուհերի մագիստրատուրայի ուսանողության, Երևանի մշակութային մի քանի հաստա-

տությունների մասնագետների և Արագածոտնի մարզի եզրի բնակչության շրջանում:

Հարցմանը մասնակցել է Հայաստանի Հանրապետության 1114 քաղաքացի: Նրանցից 83,30 %-ը ազգությամբ հայեր են, 16,7 %-ը՝ ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ, որից եզրի՝ 16,07 %, հույն, ասորի, քուրդ՝ յուրաքանչյուրը 0,18 % և ուկրաինացի՝ 0,09 %:

Հարցման մասնակիցների 62,30 %-ը քաղաքաբնակներ են, 37,70 %-ը՝ գյուղաբնակներ, 17,78 %-ը՝ արական, իսկ 82,23 %-ը՝ իգական սեռի ներկայացուցիչներ:

Հարցման մասնակիցների 54,22 %-ը մինչև 25 տարեկան է, 12,75 %-ը՝ 26-40, 19,57 %-ը՝ 41-60, իսկ 13,46 %-ը՝ 61 և ավելի բարձր տարիքի:

Կրթական առումով հարցման մասնակիցների 0,8 %-ը թերի միջնակարգ կրթությամբ քաղաքացիներ են, 0,58 %-ը՝ միջնակարգ կրթությամբ, 0,64 %-ը՝ միջնակարգ մասնագիտական, իսկ 79,80 %-ը՝ բարձրագույն կրթությամբ:

Հարցման մասնակից հայերի 81,30 %-ի կարծիքով մարդը պետք է ապրի իր նախնիների պատմական տարածքում, իսկ 18,70 %-ը գտնում է, որ բնակավայրի ընտրության հարցում մարդը պետք է լինի ազատ և կարող է ապրել ցանկացած վայրում:

Այս հարցի շուրջ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների 74,20 %-ը այն կարծիքին է, որ ամեն ոք պետք է ապրի իր նախնիների պատմական տարածքում, իսկ 25,80 %-ի կարծիքով՝ մարդը կարող է բնակվել այնտեղ, որտեղ ցանկանա: Այս հարցում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հայերից 7,1 %-ով ավելի ժողովրդավար են: Դա բնական է, քանզի հայերի մի մասը դեռևս իր պատմական հայրենիքում ապրելու, այն վերադարձնելու ցանկություն, ձգտում ունի, իսկ ազգային փոքրամասնությունները նման մոտեցմամբ, ամենայն հավանականությամբ, մեր երկրում իրենց գոյությունն արդարացնելու միտում ունեն:

Հարցումների տվյալներով հայերի 0,72 %-ը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին կարող է տեսնել կամ տեսնում է ընտանիքի անդամի (հավանաբար դա արդեն իրողություն է), 1,46 %-ը՝ հարազատի, 4,94 %-ը՝ բարեկամի, 9,87 %-ը՝ հարևանի, 9,52 %-ը՝ զործընկերոջ, 18,22 %-ը՝ ընկերոջ, 21,27 %-ը՝ քաղաքացու կարգավիճակում: Հայերի 31,01 %-ը ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին ցանկանում է տեսնել հյուրի, իսկ 2,99 %-ն առհասարակ ցանկություն չունի նրանց տեսնելու Հայաստանում: Փաստորեն հարցմանը մասնակից հայերի մեծ մասը Հայաստա-

նի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին ընդունում է սոցիալական տարածության տարբեր բևեռներում. եթե նրանց մի մասը վերջիններին ընդունում է որպես ընտանիքի անդամ, ապա մի մասը չի ցանկանում նրանց տեսնել սեփական երկրում:

Ինչ վերաբերում է Հայաստանի ազգային փոքրամասնություններին, ապա նրանք այլէթնիկ հանրությունների ներկայացուցիչներին առհասարակ չեն ցանկանում տեսնել որպես իրենց ընտանիքների անդամ, 6,78 %-ը կարող է տեսնել որպես բարեկամի, 5,08 %-ը՝ հարևանի, 5,08 %-ը՝ գործընկերոջ, 3,40 %-ը՝ ընկերոջ, 26,55 %-ը՝ քաղաքացու, 52,54 %-ը՝ հյուրի, իսկ 0,57 %-ն առհասարակ չի ցանկանում, որ նրանք ապրեն Հայաստանում: Իրականում մեր երկրի ազգային փոքրամասնությունները, մասնավորապես եզդիները, այս հարցում ավելի կոշտ վերաբերմունք ունեն, քան հայերը:

Չարցման համաձայն՝ հայերի 66 %-ը ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ հարաբերություններ հաստատելու կողմնակից է, սակայն ուսումնասիրության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր պարագաներում հայերի կողմից որոշակի սոցիալական տարածություն (դիստանցիա) մշտապես պահպանվում է, ուստի ենթադրվում է, որ հիշյալ հարաբերությունները շատ վստահելի ու մտերմիկ դրսևորում չեն կարող ունենալ: Դա է նաև հիմնական պատճառը, որ հայերի 90,3 %-ը դեմ է խառնամուսնություններին: Այս դիրքորոշման կողմնակիցները կամ մինչև 25 տարեկան երիտասարդներն են (87,96 %), կամ 61 և ավելի տարիք ունեցողները (96,42 %), մասնավորապես՝ արական սեռի ներկայացուցիչները (93,14 %): Հայերի միայն 5,22 %-ն է խառնամուսնություններին կողմ հաշվի առնելով սերը, լավ մարդ լինելը կամ մարդկային այլ գործոններ, իսկ 4,48 %-ն այդ հարցում անտարբեր կամ չեզոք դիրք է ցուցաբերում: Խառնամուսնության հարցում մեր երկրի ազգային փոքրամասնությունները, մասնավորապես եզդիները, շատ ավելի կոշտ մոտեցում ունեն և դեմ են խառնամուսնություններին՝ դրա մեջ տեսնելով իրենց ազգային առանձնահատկությունների՝ հետևաբար և ինքնուրույն կորստի վտանգ:

Վերոհիշյալ վերաբերմունքի դրսևորումներում թե՛ հայերի, և թե՛ երկրի այլ էթնիկ հանրությունների՝ գյուղական և քաղաքային, իզական և արական սեռի ներկայացուցիչների միջև ցուցանիշների էական տարբերություններ չեն դիտվում. դրանք տատանվում են 1,50 %-ից 2,20 %-ի միջակայքում: Այսպես՝ հիշյալ հարցերում քաղաքային բնակչությունը ազատամիտ է 2,07 %-ով, իսկ ինչ վերաբերում է իզական սեռի ներկայացուցիչներին, ապա նրանք ավելի ազա-

տամիտ են 2,18 %-ով: Վերջին ցուցանիշն արժանագրվել է 41-ից բարձր տարիք ունեցող կանանց մոտ, այն դեպքում, երբ երիտասարդ կանայք ընտանիքի և բարեկամության սահմանների պահպանման հարցերում գրեթե կրկնակի անգամ ավելի կոշտ դիրքորոշում ունեն:

Ուսումնասիրության տվյալներով՝ հայերի 80,88 %-ը տարբեր բնույթի հարաբերությունների մեջ են եղել Հայաստանի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ: Հարցման համաձայն՝ այդ հարաբերությունների 53,32 %-ն ունեցել է գործնական, 14,27 %-ը՝ ընկերական, իսկ 13,28 %-ը՝ պատահական բնույթ: Այդ հարաբերություններն, ըստ հաճախականության, ունեցել են հետևյալ պատկերը. ամենօրյա՝ 55,03 %, հաճախակի՝ 9,52 %, հազվադեպ՝ 16,34 %: Այլազգիների ներկայացուցիչների հետ հարաբերություն չունեցած հայերի 17,32 %-ը շփվելու համար առիթ չի ունեցել, իսկ 1,80 %-ը խուսափել է հարաբերություններ հաստատելուց:

Հայաստանի ազգային փոքրամասնությունների կողմից այլէթնիկ ներկայացուցիչների հետ հարաբերություններ հաստատելու միտումներն էական չեն տարբերվում հայերի մոտեցումներից և գրեթե նույնական են:

Աշխատանքային գործունեության ոլորտում, մասնավորապես ղեկավարենթակա կարգավիճակի հարցում, թեև «էթնիկ» գործոնը փոքր-ինչ նվազում է մասնագիտական (պրոֆեսիոնալ) գիտելիքների ու հմտությունների աճի հաշվին (38,96 %), այնուամենայնիվ հարցմանը մասնակից հայերի 61,04 %-ը գերադասում է իր ազգի ներկայացուցիչ ղեկավար ունենալ: Գրեթե նույնանման մոտեցում է դրսևորվում նաև ՀՀ ազգային փոքրամասնությունների կողմից:

Ազգային շահերի պաշտպանության հարցում ինչպես հայերի, այնպես էլ երկրի ազգային փոքրամասնությունների մեջ նկատելի է ընդգծված էթնոկենտրոն (էթնոցենտրիզմ) մոտեցում, քանզի հարցմանը մասնակիցների 99,57 %-ը բոլոր պարագաներում կողմնակից է սեփական ազգի շահը ցանկացած միջոցով պաշտպանելու դիրքորոշմանը: Այս հարցում գյուղական-քաղաքային, արական-իգական տարբեր տարիք ունեցող բնակչության մեջ ցուցանիշը գրեթե նույնական է՝ տատանումը չի գերազանցում 0,3 %-ը:

Հարցման մասնակիցների կարծիքը միանման է նաև Հայաստանում ազգային փոքրամասնությունների շահերի ու իրավունքների հարգման հարցում: Նրանց 71,1 %-ն այն կարծիքին է, որ երկրում այլէթնիկ հանրության շահերը չեն խախտվում, և բոլորը, անկախ ազգությունից, իրավահավասար իրավիճակում են, 8,82 %-ի կարծիքով, եթե դրանք խախտվում են, ապա եզակի

դեպքերում, 20,08 %-ը մնան փաստերից անտեղյակ է և միայն 1,74 %-ն է գտնում, որ նրանց իրավունքներն ու շահերը խախտվում են:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության հայ բնակչության կողմից երկրի այլազգի քաղաքացիների նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի դրսևորումներին հարկ է նշել, որ սոցիոլոգիական հարցման արդյունքների համեմատական վերլուծության վկայությամբ հայերը միօրինակ վերաբերմունք չունեն տարբեր ազգային փոքրամասնությունների հանդեպ: Այնուամենայնիվ հայ հասարակության կողմից երկրի այլէթնիկ քաղաքացիների մեծ մասը գնահատվում է որպես իրեն մոտ գտնվող ազգություն, և նրանց գերակշռող մասի նկատմամբ առկա է դրական վերաբերմունք: Ենթադրվում է, որ Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների նկատմամբ նկատված դրական և բացասական վերաբերմունքի դրսևորումների տարբերակման հիմքում ընկած են այնպիսի գործոններ, ինչպիսիք են վերջինների էթնոնշակութային առանձնահատկությունները, կրոնական պատկանելիությունը, ընդհանուր պատմական ճակատագիրը, պատմականորեն ձևավորված ազգամիջյան փոխհարաբերությունների բնույթն ու հակամարտությունները և այլ հանգամանքներ:

Ըստ հարցումների տվյալների՝ հայերն իրենց ավելի մոտ են համարում եզդիներին (90%), հույներին (89,86%), ռուսներին (81,76%), ասորիներին (64,36%) և վրացիներին (58,45%):

Նրանք դրական են վերաբերվում ինչպես վերոհիշյալ ազգային փոքրամասնություններին, այնպես էլ բուլղարներին (98,48%), բելառուսներին (84,97%), մոլդավացիներին (81,42%), գերմանացիներին (68,24%) և ուկրաինացիներին (61,49%):

Հայերի կողմից խիստ բացասական վերաբերմունքի դրսևորում է արձանագրվել Հայաստանի ազգային փոքրամասնություն հանդիսացող ադրբեջանցիների (98,21%), քրդերի (52,36%) և թաթարների (45%) նկատմամբ: Այսպիսի բացասական վերաբերմունքի դրսևորման բարձր ցուցանիշը պայմանավորված է նրանց կողմից ինչպես անցյալում, այնպես էլ անցյալ դարավերջի «ղա-րաբաղյան» հակամարտության ժամանակ հայերի նկատմամբ կիրառած բարբարոսական երևույթներով և կրոնական մոլեռանդությամբ: Բացի դրականից՝ որոշակի բացասական վերաբերմունք է դրսևորվել նաև պարսիկների (43,53%), ինձուլների (14,44%), վրացիների (11,84%), ռուսների (9,70%), աբազների (3,70%), հրեաների (3,48%), մորդվանների (2,82%), բոշաների (1,91%) և գերմանացիների (1,48%) նկատմամբ: Ինչ վերաբերում է պարսիկ-

ների նկատմամբ բացասական վերաբերմունքի դրսևորմանը, ապա ենթադրվում է, որ դա վերջին տասնամյակում Հայաստան հանգստի նպատակով ժամանակավոր ժամանած պարսիկների ակտիվ, երբեմն էլ հայերի համար անընդունելի պահվածքի հետևանք է: Կարծում ենք՝ վրացիների և ռուսների նկատմամբ նման դրսևորումները պայմանավորված են անկախության շրջանում միջէթնիկ հարաբերությունների փոքր-ինչ լարված բնույթով և դրանց սուբյեկտիվ քաղաքական մեկնաբանություններով: Մնացած ազգային փոքրամասնությունների նկատմամբ ձևավորված բացասական վերաբերմունքը, ենթադրվում է, որ անձնավորված են և միջէթնիկ հակասական բնույթ չունեն:

Ինչ վերաբերում է վստահության դիրքորոշմանը, ապա Հայաստանի Հանրապետության հայ բնակչության կողմից երկրի աղբյուրների, քրդերի և թաթարների նկատմամբ անվստահության 100 տոկոսանոց ցուցանիշ է դրսևորվել: Համեմատական կարգով վստահության դիրքորոշման որոշակի ցածր ցուցանիշ է արձանագրվել պարսիկների (7,9 %), վրացիների (7,9 %), մորդվանների (2,88 %), ինգուլների (2,36 %), հրեաների (2,36 %) և բոշաների (1,35 %) նկատմամբ: Ենթադրվում է, որ աղբյուրների, քրդերի և թաթարների հետ կապված, ինչպես բացասական, այնպես էլ անվստահության վերաբերմունքի դրսևորումները ձևավորվել են 1980-ական թվականների վերջերից Աղբյուրներում նրանց կողմից ցուցաբերված հայատյաց վերաբերմունքով, իսկ մյուս ազգությունների պարագայում՝ դրանք անձնավորված բնույթ ունեն:

Հայերի կողմից վստահության վերաբերմունքի դրսևորման բարձր միտում է փաստվել բուլղարների (36,15 %), մոլդովացիների (35,98 %), հույների (31,09 %), եզդիների (31,08 %), բելառուսների (27,36 %), գերմանացիների (24,83 %), հրեաների (20,78 %), ասորիների (18,07 %), ուկրաինացիների (18,06 %) և ռուսների (16,4 %) նկատմամբ:

Սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ հայերի կողմից ինչպես բացասական վերաբերմունքի, այնպես էլ անվստահության դրսևորման ցուցանիշներն հիմնականում բարձր են Հայաստանի Հանրապետության այն ազգային փոքրամասնությունների նկատմամբ, ովքեր պատմական այս կամ այն փուլում հայերի նկատմամբ ցուցաբերել են հայահաված քաղաքականություն և խտրական մոտեցումներ: Ընդհանուր առմամբ թե՛ դրական վերաբերմունքի, և թե՛ վստահության դրսևորման ցուցանիշները բարձր են սլավոնական, ինչպես նաև պատմական ճակատագրով հայերին մոտ գտնվող ժողովուրդների՝ հույների, ասորիների, եզդիների նկատմամբ:

Ամփոփելով ուսումնասիրության տվյալները՝ հարկ է նշել.

1. երկրի քաղաքացի այլեթնիկ հանրույթների միջավայրում բացասական վարքի դրսևորումներ չեն դիտվում,

2. միջէթնիկ հարաբերություններում հիմնականում առկա են դրական վերաբերմունքի դրսևորումներ, սակայն 2-3 ազգության նկատմամբ դիտվում են ծայրահեղ բացասական վերաբերմունքի միտումներ,

3. միջէթնիկ հարաբերություններում մեծ մասամբ նկատվում են համակրանքի և վստահության միտումներ, չնայած որ 2-3 հանրույթների նկատմամբ առկա է խիստ բացասական վերաբերմունք,

4. երկրի այլեթնիկ հանրույթներն ակտիվորեն համագործակցում են միմյանց հետ, սակայն պատրաստ չեն շատ վստահելի և մտերմիկ հարաբերությունների. նրանք միմյանց ավելի շատ փորձում են տեսնել որպես հարևան, գործընկեր և հյուր, քան ընտանիքի անդամ կամ հարազատ,

5. աշխատանքային միջավայրում սովորաբար կարևորվում են ղեկավարի մասնագիտական որակներն ու պատրաստվածությունը, սակայն գրեթե բոլոր էթնիկ հանրույթներում ընդգծված կերպով նկատվում է էթնոկենտրոն դրսևորում,

6. ամուսնության հարցում երկրի բնակչության մեծ մասն, անկախ ազգությունից, գերադասում է սեփական ազգի ներկայացուցչին,

7. երկրի բնակչության մեծ մասի կարծիքով Հայաստանում ազգային փոքրամասնությունների իրավունքներն ու շահերը չեն խախտվում, բացառությամբ եզակի դեպքերի:

***Բանալի բառեր** - փոխհարաբերություններ, վերաբերմունք, դիրքորոշում, հանդուրժողականություն, խտրականություն, ազգություն, իրավունք, շահ, պատմական տարածք*

TENDENCIES OF BEHAVIOUR AND RELATIONSHIPS BETWEEN THE ARMENIAN POPULATION AND NATIONAL MINORITIES OF THE REPUBLIC OF ARMENIA

/according to data of sociological survey in 2013-2014/

A. S. KHACHATRYAN

*Candidate of Historical Sciences,
Lecturer of Gavar State University*

According to data collected from sociological surveys, there are positive relationships between the Armenian and other ethnic populations in the Republic of

Armenia; and there are no manifestations of extreme negative behavior and attitude resulting in interethnic conflicts.

Though a lack of confidence and manifestation of negative attitude is traced by the Armenians towards national minorities, the Armeian people actively collaborate with national minorities and are tolerant towards them respecting their rights and interests.

**ТЕНДЕНЦИИ ВЗАИМООТНОШЕНИЙ И ОТНОШЕНИЕ АРМЯН К
НАЦИОНАЛЬНЫМ МЕНЬШИНСТВАМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**
(на основании социологического опроса 2013 - 2014 гг.)

А. С. ХАЧАТРЯН

*Кандидат исторических наук,
преподаватель Гаварского государственного университета*

Согласно социологическому опросу 2013-2014гг. между армянами и другими этническими группами Республики Армения в основном существуют положительные взаимоотношения и не проявляется крайне отрицательное поведение, формирующее межэтнические противоречия.

Хотя со стороны армян по отношению к некоторым этническим меньшинствам заметно некоторое недоверие и проявление отрицательного отношения, армяне активным образом сотрудничают с национальными меньшинствами, толерантны по отношению к последним и уважают их права и интересы.